ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵԴԵԿՈՒԹԻՒՆ

ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

Ը.

Տաղ Հոգեմն սուրբ Աստուածածնին։

Այսօր զուարճացան երկինք ընկալեալ հրեշտակ յերկրէ.
Մեծապէս բերկրի երկիր տուեալ բարեխօս յերկինս,
Ի մարմնազգեստից ազանց անմարմնոցն յաղթեալ 'ի փառս։
Հրաշուին երգելով հրեշտակք՝ ո՞վ է սա դիմեալ յերկրէ,
Հիւթ մարմնոյ առեալ զանձամբ՝ զարմացուցանող վերնոցն.
Որում արքայից արքայն 'ի խնդիր ելեալ Քրիստոս,
Հաղմուլթեամբ զօրաց երկնից վերափոխելով 'ի կեանս.
Տէր կենաց իշխան մահու փոխադրող իւրոյ ծնողին.
Հնչեամբ վերառեալ փառօք աւանդեալ 'ի լոյսն անձառ։
'Դ խմաստնոց սրբոց կուսից 'ի յիմանալի խորանն,
Մերձ առ Հօր և սուրբ Հոգւոյն ապաւէն ազգի մարդկան,
Երկնից և երկրի միջնորդ բարեխօս անձանց մերոց։

Յայս մեծ աւետեաց աւուրս երկինք և երկիր տօնեն,
Երրակի մասամբք աւուրց երգեն զբաւարթնոցն ջոկք.
Պատանօր ընտրեալ հօտին դասք երկոտասան եղբարց
Միխսումբ եկեալ հասին հրաւիրմամբ Հոգւոյն սրբոյ,
Ուցմամբ լապտերօք անձանց պայծառ կուսութեամբ ջահիւք։
Ինդ նոսին և մեք երգեմք 'ի պատիւ փոխման աւուրս
Յայս բազմաժողով տօնիս յանուն քո կանգնեալ յարկիս.
Պաղթանօք հայցեմք 'ի քէն լուսոյ բնակարան Դանին,
Հայցեա՛ զթողութիւն մեզաց՝ պատուողացս քոյոյ տօնիս.
Ի վերնատուողէն բարեաց որ է յաւիտեանս օրհնեալ։

Այլ տաղ փոխման սուրբ Աստուածածնին։

Մեծացիր այսօր սուրբ Աստուածածին
Լիմամբ միածնիդ առ քեզ հրեշտակօք,
Փոխել պատրաստեաց յերկրէ 'ի յերկինս։
Դունդք առաքելոցն առ քեզ ժողովեալ
Ամպովք վերածեալ 'ի Սիոն եդան,
Պատուել փառաւոր զնընջումն քո սուրբ։
Պետրոս 'ի Հռոմայ, Պաւղոս ընդ նմա
Մովսես 'ի Հնդկաց, Մատէոս 'ի Հայոց
Ի քրթթել ական առաջի քո կան։
Յահրս լուցանեն, լապտերս պատրաստեն,
Ընդրուկս ծրխեն, տեառնն կան սպասեն
Երանի երգեն քեզ օրհնեալ միայն։
Ահա դու փոխիս յերկնիցն խորանս
Մողուս 'ի ստորինս զգունդս Յիսուսի
Տուր մեզ նըշանս զպատկեր քո ամբիծ։

Լից քոյին հնորհօք զայս նրկարագիրս
Դեզ առհաւատչեայ առ մարդիկ մինալ.
Զոր առեալ օծցես լոյս կաթեցուցես։
Զրտասուօք թացեր, մեզ ընդձեռեցեր
Դեզ բըժըշկութեան նըշան փրրկական
Գայա համբարձար՝ յորդին քո յեցար։
Զմկեղէն կառօք յերկինս վերացար
Զեռամբն Յիսուսի մայրդ ամփոփեցար
Բիւրուք հրեշտակօք փառաւորեցար։
Յանդրանկաց խորանս վերոյ բազմեցար
Զյսօր բարեխօս մեզ առ Հայր մըտեր
Սիրով տօնողաց ըզնորհս ընդձեռես.
Կացեալ թախանձես զմեզ կեցուցանել։
Դեզ երկրրպագեմք կոյս պարծանք կուսից,
Յիշեա զմեզ յերկինս միջնորդ համարձակ,
Որք յանուան տաճարս քո զքեզ մեծարեմք,
Մեզ լեր բարեխօս յոր առ մերձ այժմ ես,
Օրհնեալ 'ի բարձունս 'ի մէջ յաւիտեան։

Ասմկական լեզուով գրուած երգոց մէջ ալ այս երգս կը գտնենք Զատուա-ծածնայ վերափոխման վրայ։

Ողորմ Զատուածածնին տօնին
Դայր ինջոյը արծիւն 'ի քարին,
Զալև այլ արծիւն 'ի քարին։
Շատ մեմ շատ ճրագ վառեմ
Յանուն սուրբ Զատուածածնին
Զալև այլ սուրբ Զատուածածնին.
Գաբրիէլն աւետիս երեթ
Մարիամայ, օրն կիրակի.
Զալև այլ օրն կիրակի։
Մարիամ, հրամէ հոգիտ,
Ինչ օրէնքն է 'ի հողածնին.
Զալև այլ 'ի հողածնին։
Դարձեալ պատասխան երեթ
Մարիամն այն Գաբրիէլին.
Զալև այլ այն Գաբրիէլին։
Զինչափ չեմ 'ի տալ զհոգիս
Որ գայ իմ Զատուածորդիս.
Զալև այլ իմ Զատուածորդիս։
Մեր տէրն իւր ամէն զօրօքն
Նրևեալ սուրբ Զատուածածնին։
Նլաց և 'ի ծունկն անկաւ
Զլաչեր զիւր զԶատուածորդին.
"Իմ Տէր գեմ կուտամ զհոգիս
Բայց կարօտ եմ սուրբ Մարիամիս"։

Հասին Թեւաւոր հրեշտակք
Հինտուստան խնդիր Մարիամին.
Մէ եկ ու արէկ Մարիամ
Ի կոչումն սուրբ Զատուածածնին։
Զրին ու բերին զՄարիամ
Յերկընուց դուռըն հասուցին.
Զրի դու ու գնա Մարիամ
Ի քաղաքն Երուսաղէմ։
"Զայ ես եկի ու կուգնամ սուրբ կոյս
Ես քենէ նշան մի չունիմ"։
Տաստուակն երեսոփն էած
Նշան երեթ Մարիամի.
Լաւ ու գնաց Մարիամ
Ի քաղաքն Երուսաղէմին.
Զաքեալքն յիրար ընկան
Մարիամի 'ի տես գնային.
"Մարիա, դու ուստից կուգաս
Համբարձաւ սուրբ Զատուածածին"։
Զայց. ես անկից կուգամ.
Զաքեալք չի հաւատացին.
Տաստուակն երեսոփն էած,
Տեսան ու հաւատացին։
Բաներս վարդապետն ասայ
Ի վերայ սուրբ Զատուածածնին։